

ԿԱՐԾԻՔ

Ասյա Արթուրի Սիմոնյանի

ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ասյա Սիմոնյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի մշակմանը:

Մեր հանրապետությունում առկա են առանձին հետազոտություններ նվիրված բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական-կիրառական կամ նույնն է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությանը առնչվող հարցերին: Արդարացիորեն պետք է նշել, որ նեղ մասնագիտական հարցերը լուսաբանող աշխատանքները սակավաթիվ են, իսկ մանկավարժների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությանը նվիրված աշխատանքներ չեն կատարվել: Այս առումով, տվյալ ատենախոսական աշխատանքը միտված է լրացնելու ոլորտում առկա բացը, քանի որ մանկավարժի աշխատանքը պատմականորեն ունի սոցիալ-մասնագիտական պահանջմունք, իսկ ունուցչի անձին ներկայացվող բարձր պահանջները հիմնավորված են նրա անգնահատելի դերով աճող սերնդի կրթության և դաստիարակության գործընթացում: Հետևաբար, կասկած չի հարուցում թեմայի արդիականությունը, գիտական նորույթը և հետազոտության արժեքավոր լինելը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից, ներկայացված է 141 համակարգչային էջերի վրա, պարունակում է 22 աղյուսակ, 45 նկար, 17 տրամագիր, գրականության ցանկում ներկայացվել է 171 անուն գրական աղբյուրներ:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական վարկածը, ներկայացվել են հետազոտության մեթոդները, գիտական նորոյթը, տեսական և գործնական նշանակությունները, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, արդյունքների հավաստիությունը և փորձաքննությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին **«Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության նշանակությունը մասնագիտական կրթության համակարգում»** վերնագրով գլուխը ամբողջովին նվիրված է հիմնախնդրի պատմավերլուծական ակնարկին, հիմնավորվել է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության դերն ու նշանակությունը բարձրագույն կրթության ոլորտում և մասնավորապես մանկավարժական բուհերի աշխատանքներում:

Ատենախոսության երկրորդ **«Մանկավարժական բուհի ուսանողուհիների ֆիզիկական վիճակի մոնիթորինգի արդյունքները»** վերնագրով գլխում հաջորդաբար ներկայացվել են հետազոտության խնդիրները, մեթոդները, քանակակազմը և կազմակերպումը, փաստագրող գիտափորձի՝ Շիրակի պետական համալսարանի 18-ից 20 տարեկան ուսանողուհիների ֆիզիկական վիճակի մոնիթորինգի արդյունքները, ըստ ֆիզիկական զարգացման երկու և շարժողական պատրաստվածության հինգ ցուցանիշների:

Հետազոտության տվյալների վերլուծությունը թույլ է տալիս հեղինակին բացահայտելու բուհում ապագա մանկավարժների ֆիզիկական պատրաստության որոշ հիմնախնդիրները, իսկ հայաստանի այլ բուհերում արձանագրված նմանօրինակ տվյալների հետ համեմատության արդյունքում հեղինակը ցույց է տալիս, որ Շիրակի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության ծրագիրը ոչ լիարժեք է լուծում ապագա մանկավարժական գործունեությանը ուսանողուհիների հարմարվողականության խնդիրները, ինչպես ցույց են տալիս հաջորդ գլխում կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ տվյալ բացը, հետագայում, իր բացասական ազդեցությունն է թողնում ուսուցիչների աշխատանքային գործունեության շրջանում:

Ուսումնասիրությունների արդյունքների ընդհանրացման հիման վրա հեղինակը մշակել է մանկավարժի մասնագիտության պրոֆեսիագիրը, որը մեր հանրապետությունում առաջին փորձերից մեկն է՝ կատարված մանկավարժական բուհի օրինակով:

Ֆիզկուլտուրային պրակտիկայի համար առավել կարևորվում է, որ հեղինակը մշակել է ուսանողուհիների ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ, որոնք ակնհայտորեն դյուրացնում են մանկավարժական բուհի դասախոսների աշխատանքը՝ գնահատելու ուսանողուհիների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշները և հարկ եղած դեպքում որոշակի հղկումներ կատարելու ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Ատենախոսության երրորդ՝ **«Պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածությամբ ֆիզիկական դաստիարակության պարապմունքների արդյունավետությունը»** վերնագրով գլխում, ներկայացվել են մանկավարժների և ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության կատարելագործման ծրագիրը և ձևավորող մանկավարժական գիտափորձի արդյունքները:

Սոցիոլոգիական հարցման պատասխանների քննարկումների արդյունքում՝ ի թիվս այլ հարցերի, գործող մանկավարժների շրջանում հեղինակը բացահայտել է բազմաթիվ առողջական բնույթի խնդիրներ, որոնք հանդիսանում են նվազ շարժողական ռեժիմի և նյարդահոգեբանական գերլարված աշխատանքի հետևանք: Հիմնավորվել է, որ երկուստեք հարցվողների մոտ եղել է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մասին տեսական և կիրառական գիտելիքների համալրման կարիք:

Հեղինակի փորձարարական հետազոտությունների տվյալները ելակետային նախադրյալներ են հանդիսացել մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության ծրագրի մշակման համար, որտեղ բացահայտվել և առանձնացվել են մանկավարժի պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մակարդակը որոշող անհրաժեշտ շարժողական

ընդունակությունները, հոգեֆիզիկական որակները և ֆունկցիոնալ վիճակի ցուցանիշները, ինչպես նաև այս ցուցանիշների մշակմանը ուղղված ֆիզիկական դաստիարակության միջոցները: Հեղինակը տեղայնացված 87 հատուկ ֆիզիկական վարժությունները և կիրառական մարմնամարզական վարժությունները բնութագրել է նկարներով, տրվել է բեռնվածության հստակ չափավորում և կատարման ցուցումներ:

Ա. Սիմոնյանը իր սպորտային-մանկավարժական փորձը հաջողությամբ ներդրել է հեղինակային մեթոդիկայի մշակման ժամանակ, հատուկ ուշադրություն հատկացնելով մարմնամարզության տեղայնացված կիրառական վարժություններին, որպես ուսանողուհիների՝ ապագա մանկավարժների ֆիզիկական դաստիարակության միջոցներ:

Ձևավորող մանկավարժական գիտափորձի ընթացքում, ատենախոսը մշակել և կիրառել է տեղայնացված հատուկ ֆիզիկական վարժություններից կազմված թվով 10 համալիրները: Գիտափորձարարական աշխատանքների օբյեկտիվությունը և հուսալիությունը պահպանելով՝ հեղինակը ընտրել է ֆիզիկական դաստիարակության հետազոտական պրակտիկայում լայն կիրառություն ունեցող հուսալի թեստերի և մեթոդների համալիր: Ստացված արդյունքները մշակել է մաթեմատիկական վիճակագրական մեթոդների օգնությամբ, հիմնավորելով մշակված մեթոդիկայի կիրառման արդյունավետությունը, կարևոր է նշել, որ ստացված տվյալները ունեն հավաստիության բարձր մակարդակ ($P > 0.1\%$, $P > 1\%$):

Մանկավարժների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հեղինակային մեթոդիկայի անցկացման վերաբերյալ տրվել են գործնական երաշխավորություններ, որոնք անշուշտ օգտակար կլինեն ոլորտի մասնագետների համար:

Կատարված եզրակացությունները լիովին ափոփում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթները արատացովում են հեղինակի հրատարակած յոթ հոդվածներում, սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը:

Ատենախոսությունը արժևորվում է իր թեմայի արդիականությամբ, գիտամեթոդական գրականության բավականին լայն և ընդգրկուն

ուսումնասիրությամբ, հիմնախնդրի հստակությամբ և հետազոտման արդիական մեթոդների կիրառությամբ, ունի հստակ տրամաբանական կառուցվածք, գիտական մատչելի շարադրանք: Հեղինակին հաջողվել է լիարժեք ներկայացնել մանկավարժների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնախնդրի էությունը, մշակել այդ ուղղությամբ կատարելագործման մեթոդիկա և հիմնավորել վերջինիս արդյունավետությունը:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, այնուհանդերձ այն զերծ չէ բացթողումներից և թերություններից, որոնք պարզաբանման կարիք ունեն.

1. Գրականության մեջ հաճախ կիրառվում է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական կուլտուրա և պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստություն, գտնում ենք, որ ատենախոսը պետք է պարզաբանի դրանց տարբերությունները:
2. Կարևորելով հեղինակի կողմից մշակված ուսուցիչների պրոֆեսիագիրը, միևնույն ժամանակ պետք է պարզաբանել, ուսուցիչների պրոֆեսիագրի մշակման մեթոդական մոտեցումները և առանձնահատկությունները:
3. Ատենախոսության մեջ հանդիպում է և ֆիզիկական կրթություն և ֆիզկուլտուրային կրթություն հասկացությունները, անհրաժեշտ ենք համարում, որ հեղինակը պարզաբանի դրանց տարբերությունները:
4. Բնականաբար պարզ է, որ յուրաքանչյուր պրոֆեսիոնալ խմբի ներկայացուցիչների համար անհրաժեշտ են յուրահատուկ ադպատացված ֆիզիկական վարժություններ, կարծում ենք, որ անհրաժեշտություն կա բացահայտել տեղայնացված ֆիզիկական պատրաստության միջոցների ընտրության սկզբունքները:
5. Ցավոք, ինչպես նկատվում է նմանատիպ հետազոտական աշխատանքներում և այս աշխատանքում նույնպես, առկա են առանձին տեխնիկական, խմբագրական և տերմինաբանական բնույթի վրիպումներ:

Վերոնշյալ նկատառումները ամենևին չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր բարձր գնահատականը, այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով, իր գիտական նորույթով, հետազոտության արդյունքների


հավաստիությամբ, գործնական երաշխավորությունների ու եզրակացությունների հիմնավորվածությամբ հաջողված աշխատանք է և նպատակաուղղված է մանկավարժական բուհերում ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության խնդիրների լուծմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ասյա Արթուրի Սիմոնյանի «Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկական» թեմայովատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, իր չափանիշներով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայ-Ռուսական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ՝



Ա. Լ. Գրիգորյան

ՀՌՀ ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Լ. Գրիգորյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՌՀ-ի գիտ. քարտուղար՝



Ռ. Կասաբարովա

«28» 09 2020թ.